

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՊԱՐՍԿԵՐԵՆԻ՝ ՈՐՊԵՍՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՐԵՎԵԼՅԱՆ
ԼԵԶՎԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՊՀ-ՈՒՄ

Սոնա Դավթյան

Իրանագիտության ամբիոն

Բանալի բառեր. ժամանակակից պարսկերեն, օտար լեզվի դասավանդման մոտեցումներ, մեթոդներ:

Այսօր, երբբարձրագույն տեխնոլոգիաներն ու համացանցը լիովին փոխել են ժամանակի և տարածության ընկալումները, երբ զանազան ազգերի ներկայացուցիչների միջև շփումն ամենուրեք դարձել է հասանելի ու անմիջական, մարդիկ աշխարհի տարբեր ծայրերում սկսել են առավել ինտենսիվորեն սովորել ու յուրացնել օտար լեզուներ, այդ թվում և՛ իրենց բնակավայրից հազարավոր կիլոմետրեր հեռու գտնվող երկրներում խոսվող: Օտար լեզուներ սովորում են ամենատարբեր շարժառիթներով՝ սկսած անձնական հետաքրքրասիրությունից ու նոր շփման հնարավորությունից մինչև մեծ բիզնես ծրագրեր և գիտական ուսումնասիրություններ: Օտար լեզվի յուրացման նպատակների բազմազանությունը, ինչպես նաև սովորել ցանկացողների մեծ քանակն ու նրանց անձնային առանձնահատկությունները պատճառ են դարձել, որպեսզի ստեղծվեն օտար լեզվի ուսուցանման և յուրացման նորանոր ուղղություններ, տարատեսակ մոտեցումներ, բազմաթիվ մեթոդներ և պրակտիկաներ:¹

Հայաստանում այսօր տարածում ունեցող օտար լեզվի ուսուցանման հիմնական մոտեցումները կարելի է պայմանականորեն բաժանել երկու տեսակի՝ ավանդական²և

¹Մանրամասն տե՛ս Колесникова И. Л., Долгина О. А., *Англо-русский терминологический справочник по методике преподавания иностранных языков*, СПб.: Изд-во «Русско-Балтийский информационный центр „БЛИЦ“», «Cambridge University Press», 2001 г., 220 с.

²Ավանդական ասելով ի նկատի ունենք խորհրդային շրջանում Հայաստանում տարածված օտար լեզվի դասավանդման մոտեցումը, որի հիմքում ընկած էր քերականական-թարգմանական մեթոդը (Grammar-translation method): Վերջինս ի սկզբանե լայնորեն կիրառվել է Եվրոպայում լատիներենի և հին հունարենի ուսուցանման, իսկ 19-րդ դարից նաև ժամանակակից լեզուների՝ ֆրանսերենի, գերմաներենի և անգլերենի դասավանդման մեջ: *ibid.*, cc. 38-39:

հաղորդակցական:³Առաջին, այսպես կոչված, ավանդական մոտեցումը, որն արևմտյան գրականության մեջ ունի կառուցվածքային/քերականական մոտեցում (Structural approach/Grammatical approach) անվանումը, օտար լեզվի ուսուցանման և յուրացման գործընթացում առավել կարևորում է խոսքի կառուցվածքային (համակարգային) կողմը՝ քերականությունը, ճիշտ, գրագետ խոսքը:Նրա նպատակը օտար լեզվի քերականական կառուցվածքի յուրացումն է, այդ լեզվով կարդալու և գրելու հմտությունների զարգացումը: Երկրորդ՝ հաղորդակցական մոտեցումը շեշտը դնում է խոսքի բովանդակային ասպեկտի վրա, կարևորում է հարուստ բառապաշարն ու սահունությունը: Այս մոտեցման նպատակը լեզուն որպես հաղորդակցման միջոց կիրառելն է, հետևաբար շեշտադրվում են լսել-հասկանալու և սահուն խոսելու հմտությունները: Թեև երկու մոտեցումների հետևորդներն էլ բարձրաձայնում են խոսքի զարգացման այս երկու ասպեկտների (կառուցվածքային և բովանդակային) փոխկապակցվածության և կարևորության մասին, սակայն գործնականում դասագրքերի մի մասը կազմվում է լեզվի տիրապետման չորս հմտություններին (լսել-հասկանալուն, խոսելուն, կարդալուն և գրելուն) վարժեցնելու տրամաբանությամբ, որում այդ չորսից առավել կարևորվում են առաջին երկուսը, իսկ դասագրքերի մյուս մասն ուսման գործընթացը հանգեցնում է քերականության վրա հիմնված ֆորմալ առաջադրանքների ու վարժությունների կատարմանը: Առաջին դեպքում սովորողը վերջնարդյունքում դժվարանում է ճիշտ և գրագետ խոսք կառուցել, իսկ երկրորդ դեպքում՝ տուժում է նրա բառապաշարը և խոսքի բովանդակային մասը: 1970-80-ականներից սկսած մի շարք մեթոդիստներ փորձ են անում հաշտեցնել այս երկու՝ առաջին հայացքից հակադիր, մոտեցումները: Ստեղծվել են մի շարք նոր՝ երկու մոտեցումները համադրող ուղղություններ (Eclecticism, Integrated approach և

³1970-ական թթ. Մեծ Բրիտանիայում ուսուցման հումանիստական ուղղության հիման վրա ձևավորվում է հաղորդակցական (Communicative approach) կոչվող մոտեցումը, երբ առաջ է քաշվում լեզվի դասավանդման նոր նպատակ՝ լեզվի՝ որպես հաղորդակցման միջոցի տիրապետում: Դրա հիման վրա առաջացած տարբեր մեթոդներն ու պրակտիկաներն էլ այժմ կիրառվում են հայաստանյան տարբեր ուսումնական կենտրոններում:

այլն), սակայն չի կարելի ասել, որ սրանք վերջնականապես ձևավորված են և լայն տարածում ունեն:

Լեզվի դասավանդման մոտեցումների և մեթոդների ընտրությունը մեծապես պայմանավորված է դրա ուսուցանման և յուրացման նպատակներով, ուստի յուրաքանչյուր առանձին դեպքում դասավանդողն ու սովորողն իրենք են ընտրում թե որ մոտեցումից և մեթոդից օգտվել: Ներկայում մարդիկ մեծամասամբ օտար լեզուներ սովորում են հաղորդակցման և շփման նպատակով ուստի զարմանալի չէ, որ այսօր լայն տարածում ունեն հաղորդակցական մոտեցման վրա հիմնված մեթոդները:

Անդրադառնալով հայաստանյան իրականությանը՝ պետք է նշել, որ խորհրդային և հետխորհրդային վաղ շրջանում այստեղ, գերիշխող էր լեզվի ուսուցանման ավանդական՝ կառուցվածքային մոտեցումը, սակայն վերջին 1,5-2 տասնամյակների ընթացքում, հիմնականում շնորհիվ լեզվի ուսուցման մասնավոր կենտրոնների, Հայաստանում լայն տարածում է ստացել այսպես կոչված ինտերակտիվ-հաղորդակցական մոտեցումը: Մակայն հարկ է նշել, որ պետական կրթական հաստատություններում՝ թե՛ հանրակրթության, և թե՛ միջին ու բարձրագույն մասնագիտական կրթական համակարգերում օտար լեզվի դասավանդման նոր մոտեցումներն ու մեթոդները մեծ դժվարությամբ են իրենց համար ճանապարհ հարթում: Անշուշտ վերջին տարիներին լույս են տեսել առանձին ուսումնասիրություններ և հոդվածներ՝ գերակշիռ մեծամասնությամբ նվիրված անգլերենի՝ որպես օտար լեզվի ուսուցանման այս կամ այն առանձնահատկություններին⁴, սակայն դասագրքերը հաճախ շարունակում են կազմվել նախկին մոտեցումների և նախկին տրամաբանության հիման վրա:

Վերջին տասնամյակում Իրանում և Իրանից դուրս ևս ակտիվորեն մշակվում են պարսկերենի՝ որպես օտար լեզվի դասավանդման նոր մոտեցումներ և մեթոդներ:

⁴Երզնկյան Ե. (գլխ. խմբ.), *Օտար լեզուները Հայաստանում. Գիտամեթոդական հանդես*, ՀՀ Կրթության և գիտության նախարարություն, Կրթության ազգային ինստիտուտ, 2008-2014թթ.:

Մանկավարժական միտք հանդես, Տաթև գիտակրթական համալիր, Երևան, «Զանգակ հրատարակչություն», 2009թ., 3-4, էջ. 133-185, 2013թ., 1-2, էջ. 147-234 և այլն:

Աստվածատրյան Մ. Գ., *Օտար լեզուների դասավանդման մեթոդիկա*, «Լույս», Երևան, 1985թ., 389 էջ:

<https://funnyenglishforyou.wordpress.com/2014/09/15/2352/> (հասանելի է առ 03.05.2016թ.):

Հրատարակվել են ոչ պարսկախոսների համար նախատեսված պարսից լեզվի դասավանդման բազմաթիվ դասագրքեր և ձեռնարկներ, ստեղծվել են տասնյակ կայքեր, որոնք հիմնված են ամենատարբեր մոտեցումների և մեթոդների վրա:⁵

Հայաստանում պարսից լեզվի դասավանդման ակադեմիական ավանդույթները սկսվում են դեռևս Երևանի պետական համալսարանի հիմնադրման ժամանակներից: 1923թ. Թավրիզից ԵՊՀ է հրավիրվում լեզվաբան Հրայր Աճառյանը: Նա սանսկրիտի, պարսից լեզվի պատմության և մի շարք այլ առարկաների թվում դասավանդում է նաև պարսկերեն: 1940 թ-ի սեպտեմբերից պրոֆեսոր Հ. Աճառյանի նախաձեռնությամբ ստեղծվում է արևելյան բանասիրության ամբիոն, որի հիման վրա էլ 1968թ. ձևավորվում է Արևելագիտության ֆակուլտետը որպես առանձին կառույց: Այս ողջ տարիների ընթացում պարսկերենն ինտենսիվորեն դասավանդվել է ֆակուլտետում և նպատակ է ունեցել ապագա մասնագետների համար ծառայելու որպես բանալի և գործիք իրանագիտության և հայագիտության ոլորտներում գիտական ուսումնասիրություններ կատարելու համար: Ուստի ուսումնառության ողջ ընթացքում ուսանողներին հիմնարար կերպով դասավանդվել է ժամանակակից պարսից լեզվի քերականությունն՝ նրանց մոտ ձևավորելով գրելու, կարդալու և թարգմանություններ անելու կարողություններ, պարսկերեն գեղարվեստական տեքստերից, գրավոր աղբյուրներից, պարսկալեզու հարուստ պոեզիայից օգտվելու հմտություններ: Ընդ որում, այս նյութերը ժամանակային առումով ընդգրկում են առավել քան մեկ

⁵Hoseyni M. Z., *Raveshe tadrise-e zabān-e fārsi be fārsi āmuzān-e khāreji*, Enteshārāte Sokhan, Tehrān, 1385, 270p.

Pāzārgādī A., *Fārsi āsān (Easy Persian)*, Rāhnamā Press, Tehrān, 2011, Books 1-5.

Galledāri M., *Dark-e matlab-e shenidāri: Vizheye zabān āmuzān-e gheyre irāni*, Enteshārāte Mehr Armin, 1387, 184p.

Galledāri M., *Negāresh va dastur-e zabān-e fārsi: Vizheye zabān āmuzān-e gheyre irāni*, Persian Language Center, Imam Khomeini international University, 1388, 249p.

Jadidi P. Sh., Brookshaw D. P., *The Routledge Introductory Persian Course: Fārsi shirin ast*, Routledge Tailor and Francis group, London and New York, 2010, 288p.

Jadidi P. Sh., Brookshaw D. P., *The Routledge Intermediate Persian Course: Fārsi shirin ast, Book two*, Routledge Tailor and Francis group, London and New York, 2012, 232p.

Marashi M., *Proficiency in Persian*, USA, 2005-2007, Books 1-2.

<http://www.easypersian.com>(հասանելի է առ 03.05.2016թ.)

<http://www.persiandee.com>(հասանելի է առ 03.05.2016թ.)

<http://www.farsionline.org>(հասանելի է առ 03.05.2016թ.)և այլն:

հազարամյակ՝ սկսած պարսկերենի նոր շրջանի ամենավաղ փուլից (Ռուդաքի 9-10-րդ դդ., Ֆիրդուսի՝ 10-11-րդ դդ., «Թաֆսիր-է փաք»՝10-11-րդ դդ.) մինչև մերօրյա մամուլը:(Որպես առանձին առարկաներ ամբիոնում դասավանդվել և մինչ այժմ դասավանդվում են նաև հին պարսկերեն, միջին պարսկերեն, պարթևերեն լեզուները): Դասավանդումն իրականացվել է կառուցվածքային մոտեցման և քերականական-թարգմանական ավանդական մեթոդի հիման վրա:

Այսօր ուրախությամբ կարող ենք նշել, որ համալսարանում հասանելի են դարձել տեխնիկայի այնպիսի միջոցներ, ինչպիսիք են էլեկտրոնային ինտերակտիվ գրատախտակը, նոթբուքը, պրոյեկտորը և ժամանակակից մեթոդներով լեզվի ուսուցման համար անհրաժեշտ այլ միջոցներ, որոնք հնարավորություն են տալիս հարստացնելու դասավանդման մեթոդական գործիքաշարը, կիրառելու ուսուցանման նոր ձևեր և հնարքներ: Միևնույն ժամանակ այսօր փոխվել են նաև հասարակական պահանջներն ու կարիքները: Կայուն զարգացող հայ-իրանական հարաբերությունները, առևտրի, տուրիզմի, մշակույթի և այլ բնագավառներում երկրների միջև օրեցօր արձանագրվող դրական զարգացումները մեր կրթական համակարգից պահանջում են պատրաստել որակյալ մասնագետներ, որոնք կկարողանան արդյունավետ գործունեություն ծավալել նասվերոնշյալ բոլոր բնագավառներում: Հաշվի առնելով, որ ԵՊՀ իրանագիտության ամբիոնն այսօր մեր հանրապետությունում միակ ուսումնական կենտրոնն է, որտեղ պարսկերենը դասավանդվում է որպես առաջին մասնագիտական լեզու, պետք է արձանագրել, որ որակյալ մասնագետներ պատրաստելու և, առաջին հերթին, այդ մասնագետների՝ պարսկերենի տիրապետման բարձր մակարդակը ապահովելու գործը և պատասխանատվությունը դրված է այս կենտրոնի վրա:

Նկատի ունենալով վերոնշյալը՝ ներկայում ԵՊՀ Արևելագիտության ֆակուլտետի իրանագիտության ամբիոնում «Մասնագիտական արևելյան լեզու (Ժամանակակից պարսկերեն)» առարկայի դասավանդման նպատակը սահմանելիս հարկ է հաշվի առնել հասարակական պահանջմունքներից և ընդհանուր կրթական նպատակից բխող հետևյալ առաջնահերթությունները.

- աշխատաշուկա
- գիտական գործունեություն
- միջմշակութային հաղորդակցություն և սոցիալական ներառում

Ուստի ԵՊՀ-ում ժամանակակից պարսկերենի դասավանդման նպատակն⁶ էպատրաստել մասնագիտական լեզուն սահուն և հմտորեն կիրառող մասնագետներ և քաղաքացիներ հայաստանյան աշխատաշուկայում, գիտական գործունեության և միջմշակութային հաղորդակցության ու սոցիալական ներառման ոլորտներում արդյունավետ գործունեություն իրականացնելու համար:

Հարկ է նշել, որ կրթականնպատակիայս երեք առաջնահերթություններից բխողպարսկերենի դասավանդմաննպատակը դառնում է բազմաշերտ, իսկոլորանից ածանցվող խնդիրները՝ տարատեսակ: Այսպես օրինակ, գիտական գործունեությամբ զբաղվող մասնագետի համար առաջնային կարևորություն ունի պարսկերենի՝ որպես լեզվական համակարգի և կառույցի իմացությունը, այդ լեզվով կարդալու, գրելու և թարգմանելու կարողությունները: Մինչդեռ, օրինակ, տուրիզմի ոլորտում ներգրավված մասնագետի համար առավել առաջնային են լսել-հասկանալու, խոսելու կարողությունները ևմիջմշակութային հաղորդակցությանհմտությունները: Այս տարբերություններն առաջ են բերում լեզվի դասավանդման տարբեր մոտեցումների ու մեթոդների համադրման անհրաժեշտություն:Տվյալ պարագայում անհրաժեշտ է համադրել ճանաչողական մոտեցումները (Cognitive approach, Grammar-translation method, Consciousness raising approach, Process-oriented approach) հաղորդակցական և այլ մոտեցումների հետ (Communicative language teaching, Audiolingual method, Audiovisual method, Task-based learning) և կամ կիրառել արդեն իսկ համադրված մոտեցումներն ու մեթոդները, ինչպիսիք են էկլեկտիկ կամ կոմբինացված մեթոդը (Eclecticism), ինտեգրացված մեթոդը (Integrated approach) և այլն:

⁶Ի նկատի ունենք ոչ թե նեղ՝ առարկայական նպատակը, այլ լայն իմաստով նպատակը, որն ածանցվում է ԵՊՀ-ում «Իրանագիտություն» մասնագիտությամբ մասնագետներ պատրաստելու ընդհանուր կրթական նպատակից և դրա կարևորագույն բաղկացուցիչն է:

Բացի կրթական նպատակից բխող համապատասխան մեթոդների ընտրության անհրաժեշտությունից, լեզվի դասավանդման գործընթացում կա ևս մեկ կարևոր հանգամանք, այն է՝ որևէ կոնկրետ երկրում տվյալ օտար լեզվի ուսուցման համար առավել արդյունավետ միջոցների մշակումն ու կիրառումը: Դրանք պետք է հիմնված լինեն և հաշվի առնեն խնդրո առարկա օտար լեզվի և սովորողի մայրենի լեզվի առանձնահատկությունները, ինչպես նաև դրանց միջև առկա նմանությունները: Ուստի ԵՊՀ-ում պարսից լեզվի դասավանդման համադրական ցանկացած մեթոդ կիրառելիս, անպայման պետք է հաշվի առնել և դասապրոցեստում արդյունավետորեն օգտագործել հայախոս միջավայրում պարսկերենի դասավանդման հետևյալ առանձնահատկությունները՝

- իրանական լեզուներից մեծաթիվ փոխառությունների առկայությունը հայերենում,
- պարսկերենի և հայերենի քերականական ձևերի, շարահյուսության, դարձվածքների և ընդհանրապես լեզվամտածողության նմանություններն ու ընդհանրությունները,
- իրանցիների և հայերի հասարակական և մշակութային առանձնահատկություններն ու նմանությունները:

Այսպիսով, հստակ սահմանված նպատակի գիտակցման, տարբեր մեթոդների և մոտեցումների համադրման և հայախոս միջավայրում պարսկերենի դասավանդման առանձնահատկությունները հաշվի առնելու շնորհիվ, ԵՊՀ-ում «Մասնագիտական արևելյան լեզու (ժամանակակից պարսկերեն)» առարկայի դասավանդումը կարող է դառնալ մերօրյա պահանջներին ու առկա միջոցներին համապատասխան, հասարակական կարիքների բավարարմանը ծառայող ուսումնակրթական գործընթաց:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Աստվածատրյան Մ. Գ., Օտար լեզուների դասավանդման մեթոդիկա, «Լույս», Երևան, 1985թ., 389 էջ:
2. Երզնկյան Ե. (գլխ. խմբ.), Օտար լեզուները Հայաստանում. Գիտամեթոդական հանդես, ՀՀ Կրթության և գիտության նախարարություն, Կրթության ազգային ինստիտուտ, 2008-2014թթ.:
3. Մանկավարժական միտք հանդես, Տարև գիտակրթական համալիր, Երևան, «Զանգակ հրատարակչություն», 2009թ., 3-4, էջ. 133-185, 2013թ., 1-2, էջ. 147-234:
4. Колесникова И.Л., Долгина О.А., Англо-русский терминологический справочник по методике преподавания иностранных языков, СПб.: Изд-во «Русско-Балтийский информационный центр „БЛИЦ"», «Cambridge University Press», 2001 г., 220 с.
5. Pāzārgādi A., Fārsi āsān (Easy Persian), Rāhnamā Press, Tehran, 2011, Books 1-5.
6. Galledāri M., Dark-e matlab-e shenidāri: Vizheye zabān āmuzān-e gheyre irāni, Enteshārāte Mehr Armin, 1387, 184p.
7. Galledāri M., Negāresh va dastur-e zabān-e fārsi: Vizheye zabān āmuzān-e gheyre irāni, Persian Language Center, Imam Khomeini international University, 1388, 249p.
8. Marashi M., Proficiency in Persian, USA, 2005-2007, Books 1-2.
9. Jadidi P. Sh., Brookshaw D. P., The Routledge Introductory Persian Course: Fārsi shirin ast, Routledge Tailor and Francis group, London and New York, 2010, 288p.
10. Jadidi P. Sh., Brookshaw D. P., The Routledge Intermediate Persian Course: Fārsi shirin ast, Book two, Routledge Tailor and Francis group, London and New York, 2012, 232p.
11. Hoseyni M. Z., Raveshe tadrīs-e zabān-e fārsi be fārsi āmuzān-e khāreji, Enteshārāte Sokhan, Tehrān, 1385, 270p.
12. <https://funnyenglishforyou.wordpress.com/2014/09/15/2352/> (հասանելի է առ 03.05.2016թ.):

13. <http://www.easypersian.com> (հասանելի է առ 03.05.2016թ.)
14. <http://www.persiandee.com> (հասանելի է առ 03.05.2016թ.)
15. <http://www.farsionline.org> (հասանելի է առ 03.05.2016թ.):